

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ կրթության և գիտության

նախարար՝ Ա.Աշոտյան

«_____» _____ 2009 թ.

ՀՀ պետ. գրանցման թ. _____

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

Մասնագիտությունը՝ 310201 Անասնաբուծություն
դասիչ, անվանում

Որակավորման աստիճանը՝ Գյուղատնտեսության բակալավր
անվանում

Ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից

1. 310201, Անասնաբուծություն

դասիչ, մասնագիտության անվանում

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1.1. 310201 Անասնաբուծություն

դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությունը հաստատված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թ. օգոստոս -ի 30 -ի թ. 1038-Ն որոշմամբ:

1.2. Շրջանավարտի որակավորումը՝ գյուղատնտեսության բակալավր

անվանում

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

գյուղատնտեսության բակալավրի

անվանում

պատրաստման հիմնական կրթական ծրագրի յուրացման նորմատիվային ժամկետը 4 տարի 8 ամիս է :

1.3. Շրջանավարտի որակավորման բնութագիրը.

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ

դասիչ, մասնագիտության անվանում

գյուղատնտեսության բակալավրը բուհն ավարտելուց անմիջապես հետո կարող է զբաղեցնել հետևյալ պաշտոնները՝

- արտադրական օբյեկտի ղեկավար և անասնաբույժ մասնագետ,
- ԳԱՄԿԻ մասնագետ և ղեկավար,
- մասնագետ խորհրդատու,
- տոհմային կայանների մասնագետ,
- արհեստական սերմնավորման կայանների մասնագետ:

1.3.1. *Մասնագիտական գործունեության բնագավառը.*

310201 Անասնաբուծություն

մասնագիտությունը

դասիչ, մասնագիտության անվանում

առնչվում է գիտության (տեխնիկայի, տեխնոլոգիաների, կառավարման և այլն) այն բնագավառին, որը ներառում է մարդկային գործունեության եղանակների, միջոցների և մեթոդների այն ամբողջությանը, որն ուղղված է՝ **անասնաբուծության տարբեր ճյուղերի կենդանիների բուծման, կերակրման, պահպանման և մթերքների ու հումքի արտադրության** բնագավառների ստեղծմանը, կիրառմանը և գիտագործնական խնդիրների լուծմանը:

1.3.2. *Մասնագիտական գործունեության օբյեկտները.*

Գյուղատնտեսական կենդանիները, ընտանի և որսորդական կենդանիները, թռչունները, գազանները, մեղուն, ձկները, անասնաբուծության մթերքների արտադրության տեխնոլոգիական պրոցեսները, բուսական և կենդանական ծագման կերերը և դրանց արտադրության տեխնոլոգիական պրոցեսները:

1.3.3. *Մասնագիտական գործունեության տեսակները.*

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

գյուղատնտեսության բակալավրը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված հիմնարար և մասնագիտական պատրաստությանը համապատասխան կարող է կատարել մասնագիտական գործունեության հետևյալ տեսակները՝

արտադրա- տեխնոլոգիական

կազմակերպական – կառավարչական

գիտա-հետազոտական

1.3.4. *Մասնագիտական գործունեության ընդհանրական խնդիրները.*

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

գյուղատնտեսության բակալավրը կախված մասնագիտական գործունեության
որակավորման աստիճան

տեսակից, պետք է պատրաստ լինի լուծելու հետևյալ մասնագիտական խնդիրները.

- ա/ ապահովել բոլոր տեսակի կենդանիների և թռչունի ռացիոնալ կերակրումը,, պահվածքը, բուծումը և մթերքների ու հումքի արտադրության տեխնոլոգիաները,
- բ/ կենդանիների ընտրասերման, կերակրման, նոր տեխնոլոգիաների ներդրման գիտահետազոտական աշխատանքների պլանավորում և իրագործում,
- գ/ բարձրորակ արտադրանքի արտադրության կառավարում:

1.3.5. *Որակավորման պահանջները.*

Մասնագիտական խնդիրները լուծելու նպատակով գյուղատնտեսության բակալավրը
որակավորման աստիճան

կատարում է հետևյալ գործառնությունները՝

- ապահովում է հոտի վերարտադրությունը, մատղաշի աճեցումը, կենդանիների արդյունավետ օգտագործումը;
- կատարում է անասնաբուծական մթերքների և հումքի արտադրության տնտեսապես արդյունավետ և առաջադեմ տեխնոլոգիաների ընտրություն;

- պլանավորում է անասնաբուժական մթերքների և հումքի արտադրությունը, գնահատում է արտադրվող արտադրանքի որակը;
- ընտրում է կենդանիների բուժման և կերակրման առավել արդյունավետ եղանակներ և տեխնոլոգիաներ:
- մասնակցում է անասնաբուժական տնտեսությունների մասնագիտական խնդիրների առաջադրման, ծրագրերի կազմման և լուծմանն ուղղված աշխատանքների բոլոր փուլերին,
- կազմակերպում է նյութերի, միջոցների, սարքավորման, տեխնոլոգիական գործընթացների արդյունավետ օգտագործման գործառնություններ, մասնակցում է անասնաբուժության բնագավառի գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման իրականացման և արդյունքների մշակման բոլոր փուլերին,
- ուսումնասիրում է անասնաբուժության բնագավառին առնչվող մասնագիտական գրականությունը և գիտատեխնիկական ինֆորմացիան, ծանոթ է բնագավառի գիտատեխնիկական նորություններին և նվաճումներին,
- օգտվում է անասնաբուժության բնագավառի ինֆորմացիոն տեխնոլոգիաներից, տվյալների բազաներից, փորձագիտական համակարգերից և կիառական ծրագրերի փաթեթներից,
- կազմակերպում է իր ենթակայության ստորաբաժանման աշխատանքը:
Գյուղատնտեսության բակալավորը պետք է ծանոթ լինի՝
որակավորման աստիճան
- իր մասնագիտական գործունեության բնագավառին առնչվող իրավական ակտերին, որոշումներին, կարգադրություններին, մեթոդական և նորմատիվային նյութերին,
- գործող չափորոշիչներին, բնագավառի սարքավորման, ինֆորմատիկայի միջոցների տեխնիկատնտեսական ցուցանիշներին, տեխնոլոգիաներին, դրանց շահագործման կարգացույցներին,
- գիտահետազոտական աշխատանքների իրականացման արդյունքով ստացված տվյալների ներկայացման, հաշվետվությունների և տեխնիկական փաստաթղթերի կազմման եղանակներին,
- աշխատանքային օրենսդրության հիմունքներին, աշխատանքի պաշտպանության նորմերին և կանոններին:

1.3.6 Մասնագիտական հարմարման հնարավորությունը

Գյուղատնտեսության բակալավորը կարող է հարմարվել հարակից
որակավորման աստիճան

մասնագիտական գործունեության հետևյալ տեսակներին՝ կերարտադրություն, գենետիկա և սելեկցիա, աշխատատար պրոցեսների մեքենայացում:

1.4. Շրջանավարտի կրթությունը շարունակելու հնարավորությունը

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ բարձրագույն մասնագիտական դասիչ, մասնագիտության անվանում

կրթության հիմնական կրթական ծրագիրը յուրացրած գլոբալ տնտեսության բակալավրը պատրաստ է կրթությունը շարունակելու

- կրճատված ժամկետներում ստանալու բակալավրի որակավորման աստիճան՝ 2-րդ մասնագիտության գծով,
- մագիստրատուրայում՝ ստանալու մագիստրոսի որակավորման աստիճան, որակավորման աստիճան
- ասպիրանտուրայում՝ /միայն դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի հիմնական կրթական ծրագիրը յուրացնելուց հոտո/՝ ստանալու գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2. Դիմորդի պատրաստականության մակարդակին ներկայացվող պահանջները

2.1. Դիմորդի նախորդող կրթական մակարդակը՝ միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն կամ միջին մասնագիտական կրթության:

2.2. Դիմորդը պետք է ունենա՝

պետական նմուշի վկայական, միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթության, կամ միջին մասնագիտական կրթության, կամ նախնական մասնագիտական կրթության մասին, որում կա գրառում դիմորդի միջնակարգ /լրիվ/ ընդհանուր կրթություն ստանալու մասին, կամ բարձրագույն մասնագիտական կրթության մասին:

3. 310201 Անասնաբուծությունը ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ

դասիչ, մասնագիտության անվանում

Գյուղատնտեսության բակալավրի ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

3.1. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը որակավորման աստիճան
նշակվում է սույն պետական կրթական չափորոշիչով և ներառում է՝ մասնագիտության ուսումնական պլանը, ուսումնական դասընթացների և պրակտիկաների ծրագրերը:

3.2. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի որակավորման աստիճան
բովանդակության պարտադիր նվազագույնի իրականացման պայմաններին և ուսումնառության ժամկետներին ներկայացվող պահանջները կանոնակարգվում են սույն պետական կրթական չափորոշիչով:

3.3. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական որակավորման աստիճան
ծրագիրը ձևավորվում է հանրապետական, բուհական, ուսանողի կողմից ընտրովի և ֆակուլտատիվ բաղադրիչների դասընթացներից:
Ուսանողի կողմից ընտրովի դասընթացները յուրաքանչյուր կրթաբլոկում բովանդակորեն պետք է լրացնեն հանրապետական բաղադրիչում նշված դասընթացները:

3.4. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական որակավորման աստիճան
ծրագիրը պետք է նախատեսի հետևյալ կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների ուսումնասիրումը՝

ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական՝	ՀՍՏ,
ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական՝	ԸԲ,
ընդհանուր մասնագիտական՝	ԸՄԴ,
մասնագիտացման՝	ՄԴ,
ֆակուլտատիվ՝	Ֆ,

Ինչպես նաև եզրափակիչ պետական որակավորումը:

3.5. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական
որակավորման աստիճան

Ժրագրի բուհական բաղադրիչի բովանդակությունը պետք է ապահովի շրջանավարտի պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչով սահմանված որակավորման բնութագրի համաձայն:

Բուհական բաղադրիչում ընդգրկված դասընթացները երաշխավորական բնույթ են կրում:

**4.310201 ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎԱԶԱԳՈՒՅՆԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

	ընթացների անվանումը և հիմնական բաժինները	կրե- դիտ	ժամեր
1	2	3	4
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ		
	<u>Հանրապետական բաղադրիչ</u>		
1	<u>Ֆիզիկական կուլտուրա</u> . ֆիզիկական կուլտուրայի սոցիալ-կենսաբանական հիմքերը, անհատի ֆիզիկական կուլտուրան, ընդհանուր ֆիզիկական և հատուկ պատրաստությունը ֆիզդաստիարակության համակարգում: Ինքնուրույն պարապմունքների մեթոդիկայի հիմունքները և սեփական օրգանիզմի վիճակի ինքնավերահսկումը:		240
2	<u>Հայ ժողովրդի պատմություն</u> . Պատմական գիտության էությունը, մեթոդները Հայ ժողովրդի ծագումը և կազմավորումը, հին հայկական պետության կազմավորման ու զարգացման փուլերը Բագրատունիների թագավորության հիմնումն, կիլիկիայի հայկական պետությունը, հայաստանը 19-րդ դարի 1-ին և 2-րդ կեսին: Հայաստանի առաջին հանրապետությունը: Հայաստանը 1991-2003թ. արցախյան հիմնահարցը, հայկական մշակույթը:	4	120
3	<u>Հայոց լեզու և հայ գրականության</u> Լեզուն, որպես հաղորդակցության միջոց, աշխարհի լեզուները և լեզվաընտանիքները: Հայոց գիրը և գրչությունը: Խոսքի կուլտուրայի հիմքերը և բաղկացուցիչները գործառարական ոճեր, գիտական և հրապարակախոսական ոճի ընդհանուր բնութագիրը: ճարտասանական արվեստի պատմություն և հիմնական սկզբունքների համառոտ ակնարկ, ձայնի դրվածքը, շնչառության տեխնիկան: Խոսքի կազմակերպման հոգեբանական, հուզական և տրամաբանական մեխանիզմները:	4	120

4	<p><u>Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ</u></p> <p>Ռուսաց լեզու դասընթացի հաղորդակցական և պրակտիկ բնույթը, քերականական գիտելիքների ուսուցումը: Ուսուցանվող լեզվի երկրի մշակույթը և ավանդույթները: Խոսքի բարեկանոնության տարբեր միջոցների կիրառումը որոշակի իրավիճակներում, խոսելու ունակությունը: Հրապարակային խոսքի հիմունքները ընթերցանություն, տեքստերի տեսակները: Գրավոր խոսքի ունակություն, համառոտագրում, հաղորդում, դիմում, տեղեկանք և այլն:</p>	4	120
5	<p><u>Օտար լեզու</u> Հնչյունների արտասանության, ինտոնացիայի, շեշտադրական համակարգի և խոսքի ռիթմի յուրահատկությունը, տառադարձության ընթերցանությունը: Ընդհանուր և տերմինաբանական բնույթի 2000 ուսուցողական բառային միավորով բառապաշարի նվազագույն:</p> <p>Հասկացություն բառակազմական հիմնական միջոցների մասին: Գրավոր և բանավոր հաղորդակցության ժամանակ քերականական երևույթներ, բանավոր և գրավոր խոսք, ունկնդրում, զեկույցներ, ռեֆերատ կենսագրություն և այլն:</p>	8	240
6	<p><u>Մշակութաբանություն</u>. Մշակութաբանություն և մշակույթի պատմություն, մշակույթի կառուցվածքը և գործառությունները, մշակույթ և քաղաքակրթության արվեստի տեսակների առաջացումը: Հին աշխարհի մշակույթ, անտիկ աշխարհի մշակույթ, միջնադարյան մշակույթ, վերածննդի մշակույթ, հումանիզմ և արվեստ, դարաշրջաններ և գեղարվեստական ուղղություններ:</p>	2	60
7	<p><u>Քաղաքագիտություն</u>. Քաղաքագիտության օբյեկտը, մեթոդները, քաղաքական ուսմունքերի զարգացման հիմնական փուլերը, քաղաքականություն և քաղաքական իշխանություն, քաղաքական համա-կարգ, ռեժիմ, քաղաքական իշխանության սոցիալական սուբյեկտները, քաղաքական գործընթացներ, քաղաքական տեխնոլոգիաներ, քաղաքական օրոբագիստիկա:</p>	3	90

8	<p><u>Իրավագիտության</u></p> <p>Պետությունն ու իրավունքը, իրավունքի նորմերը և աղբյուրները, համակարգը, ճյուղերը, սահմանադրական իրավունք, քաղաքացիական իրավունք, հեղինակային իրավունք, վարչական, աշխատանքային իրավունք, վարչական իրավունք, քրեական իրավունք, հողային իրավունք: Քաղաքացիական դատավարության իրավունք, միջազգային իրավունք:</p>	4	120
9	<p><u>Փիլիսոփայություն:</u> Փիլիսոփայության գիտելիքների կառուցվածքը, ուսմունք կեցության մասին, օրենք և օրինաչափություն, գիտակցություն, նյութականը և իդեալականը, լեզու և մտածողություն, ճշմարտության հիմնախնդիրները, ազատություն և պատասխանատվություն, արդարություն, իրավունք, բնություն և հասարակություն, բնապահպանական շարժումներ:</p>	4	120
10	<p><u>Տնտեսագիտության տեսություն</u></p> <p>Բարիք, պահանջմունքներ, ռեսուրսներ տնտեսական համակարգեր տնտեսագիտության տեսության մեթոդները: Շուկա, առաջարկ և պահանջարկ: Մասշտաբի էֆեկտը, ծախսերի տեսակները, ձեռնարկություն, հասույթը և շահույթը, մենաշնորհ, աշխատանքի շուկա, աշխատավարձ և զբաղվածություն, պետության դերը: Ազգային եկամուտ, գների ինդեքսները, գործազրկությունը և նրա ձևերը, սպառում և խնայողություն, փողը և նրա ֆունկցիաները, բաց էկոնոմիկայի ձևավորումը:</p>	4	120
	<p><u>Բուհական բաղադրիչ</u></p>		
1	<p><u>Չաշվապահական հաշվառման հիմունքներ և հարկ.քաղ.</u></p> <p>Չաշվապահական հաշվառման կազմակերպումը սեփականության տարբեր ձևերում, վարձատրություն դրամային միջոցների կենդանիների աճեցման, հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների, կապիտալ ներդրման հաշվառում; արտադրության, պատրաստի արտադրանքի, ֆոնդերի, փոխառությունների և ռեզերվների հաշվառում, ֆինանսական արդյունքների և շահույթի հաշվառում, եկամտահարկի հաշվառում և բաշխում:</p>	3	90

2	<u>Վիճակագրություն</u> Մաթեմատիկական մեթոդների օգտագործումը անասնաբուծությունում /միջին մեծություններ, տարբերության հավաստիություն, կոռելացիոն տիպեր, ռեգրեսիա, ժառանգելիության գործակից, դիսպերսիոն անալիզ/:	3	90
3	<u>Գյուղ. էկոնոմիկա և մարքեթինգի հիմունքներ</u> Բիզնեսի ոլորտի ընտրություն,, նվազագույն ռեսուրսը, արտադրության տնտեսական արդյունավետությունը այլ ընտրանքային ներդրումներն ու ծառայությունը, ցեղի տնտեսական գնահատումը, հողի, ջրի, հիմնական և շրջանառու կապիտալի գնահատում և նրանց արդյունավետության որոշման մեթոդիկան:	4	120
4	<u>Գյուղ. արտադրության կազմակերպում և կառավարում</u> Գյուղատնտեսական ձեռնարկությունների ձևերը և արտադրական գործունեության սկզբունքները, հողային տարածքի օգտագործումը, մասնագիտացումը և ճյուղերի զուգակցումը գյուղ. ձեռնարկություններում: Արտադրական միջոցների օգտագործման կազմակերպումը: Նյութա-տեխնիկական ապահովումը, աշխատանքի կազմակերպումը, բուսաբու-ծության, կերարտադրության և գյուղ. կենդանիների պահվածքի կազմակերպումը: Կառավարման գործընթացները, մեթոդները, դասակար-գումը, համակարգը, կառավարման արդյունավետությունը:	3	107
	<u>Ընտրովի դասընթացներ</u>		60
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ		
	<u>Հանրապետական բաղադրիչ</u>		
1	<u>Բարձրագույն մաթեմատիկա</u> Կորդինատների մեթոդը, ուղիղ գիծ, երկրորդ կարգի կորեր, սահմանների տեսություն, ածանցյալ և դիֆերենցիալ, անորոշ ինտեգրալ, որոշյալ ինտեգրալ, դիֆերենցիալ հավասարումներ, շատ փոփոխականով ֆունկցիաներ, հավասարությունների տեսություն, պատահական մեծություններ:	4	120
2	<u>Ֆիզիկա, կենսաֆիզիկայի հիմունքներով</u>	5	150

	Մեխանիկա, մոլեկուլյար ֆիզիկա, տատանումներ և ալիքներ, էլեկտրականություն և մագնիսականություն, օպտիկա, ատոմի ֆիզիկա, հիդրավիկ դիմադրություն, հեմոլիզ, սիրտը մեխանիկական պոմպ, արյան հոսքը, զարկերակային ճնշում, արյան դերը, կազմը, ուլտրաձայն և ինֆրաձայն կոնդեսատոր, բիոպոտենցիալ, թաղանթային պոտենցիալների տարբերությունը:		
3	<u>Ինֆորմատիկա և ինֆ. տեխ. հիմունքներ.</u> Գաղափար ինֆորմացիայի և տվյալների մասին, հաշվիչ տեխնիկայի և ցանցերի բնութագիրը համակարգիչների հիմնական տարրերը, բնութագիրը և ընդհանուր կառուցվածքը, ալգորիթմացում, ծրագրային ապահովում, ծրագրավորում, ինֆորմատիկայի հիմունքները, համակարգիչների տեխնիկական ապահովումը: Տեստատիպ, ստեղնաշար, տպիչ, մոդեմ, ֆաքս, մոդեմ, ջոյստիկ, մկնիկ, սկաներ:	4	120
4	<u>Անօդաչուական քիմիա</u> Նյութի կառուցվածքը, քիմիական ռեակցիաների էներգետիկական քիմիական հավասարակշռություն, լուծույթների տեսություն, էլեկտրաքիմիա, քիմիական կինետիկա և կատալիզի բաժին, բիոգեն տարրերի քիմիա, որակական անալիզ, կատիոնների անալիզ, անիոնների անալիզ, քանակական անալիզ, էլեկտրաքիմիա:	4	120
5	<u>Օրգանական քիմիա.</u> Ածխաջրածիններ, ֆունկցիոնալ խմբերով ածխաջրածիններ, օքսիմիացություններ, օքսո միացություններ, կարբոնական թթուներ, ճարպեր, ածխաջրեր, ամինաթթուներ, հետերոցիկլիկ միացություններ:	4	120
6	<u>Կենսաքիմիա:</u> Կենսաէներգետիկա, ածխաջրերի նյութափոխանակությունը, ճարպերի և ազոտական նյութափոխանակության ինտեգրացումը, բուժերային համակարգեր, սպիտակուցները, ֆերմենտները, կյանքը որպես մոլեկուլյար պրոցես:	6	180
7	<u>Անալիտիկ քիմիա</u>	2	60

	<p>Որակական անալիզ: Կատիոնների անալիզ, անիոնների անալիզ: Չոր աղի անալիզ:</p> <p>Քանակական անալիզ: Թթվահիմնային տիտրում: Օքսիդավերականգման եղանակներ: Պերմանգանաչափություն, յոդաչափություն: Կոմպլեքսանոմետրիա: Անալիզի ֆիզիկա-քիմիական եղանակներ: Ֆոտոկոլորիմետրիա: Քրոմատագրաֆիա:</p>		
8	<p><u>Կենդանաբանություն.</u> Կենդանիների ապրելավայրը, համակեցության ձևերը, նախակենդանիների, սպունգների, աղեխորշավորների տիպերը: Տափակ, կլոր, օղակավոր որդերի տիպերը:</p> <p>Չողվածոտանիների, փափկամարմինների տիպերի բնութագրումը, երկրորդաբերանավորներ, քորդավորներ: Անգանգերի ենթատիպ: Ողնաշարավորների ենթատիպ, դասերի կարգաբանությունը, ձկների և սողունների բազմազանությունը: Թռչունների դաս: Կաթնասունների դաս: Թռչունների ու կաթնասունների բուժվող տեսակները:</p>	5	150
9	<p><u>Բուսաբանություն.</u> Բուսական բջիջների ձևերը և չափսերը, բուսական հյուսվածքներ, բույսերի ձևաբանություն, գեներատիվ օրգաններ, բույսերի աճը, զարգացումը և բազմացումը:</p> <p>Բույսերի կարգաբանությունը, բարձրակարգ բույսերը և նրա բաժինները, ծածկասերմերի դասերի բնութագիրը և կարգաբանությունը: Միաշաքիլավորների դասին պատկանող ընտանիքները:</p>	3	90
10	<p><u>Ազոտէկոլոգիա և շրջակա միջավայրի պահպանություն.</u></p> <p>Բիոսֆերան և մարդը, շրջակա միջավայրի գլոբալ խնդիրները, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման և բնության պահպանության սկզբունքները, էկոլոգիական պրակտիկում, էկոլոգիան որպես գիտությունների կոմպլեքս, որը կարգավորում է բնության և հանրության փոխհարաբերությունները:</p>	4	120
11	<p><u>Կենսատեխնոլոգիա</u> Գենային ինժեներիան որպես</p>	4	120

	<p>գենետիկական ինժեներիայի բաղկացուցիչ մաս, գեների սինթեզումը, ՂՆԹ-ի հիբրիդային մոլեկուլի ստացումը, վիրուսային գեների փոխատեղությունը և տեղադրումը, սոմատիկ հիբրիդացում, հիբրիդոմներ, սաղմերի փոխպատվաստումը և կլոնավորումը, գնահատումը և պահպանումը:</p>		
12	<p><u>Կենսագործունեության անվտանգություն</u> Մարդ-միջավայր-մեքենա-կենդանի համակարգը, կենսագործունեության անվտանգություն, նորմատիվա-իրավական փաստաթղթերը, ծառայության կառուցվածքը և խնդիրները, գյուղ. կենդանիների խնամքի, ֆիքսման, ռեկտալ հետազոտման և վարակազերծման աշխատանքներին ներկայացվող անվտանգության պահանջները, էլեկտրա-հարվածից պաշտպանվելը, ամպրոպապաշտպանության կրակմարիչ տեխնիկա, էվակուացիայի խնդիրները:</p>	2	60
13	<p><u>Քաղ. պաշտպանության և անվտանգությունը արտակարգ իրավիճակներում:</u> Քաղաքացիական պաշտպանության կառուցվածքը և խնդիրները, արտակարգ իրավիճակների դասակարգումը և կանխարգելումը, ռադիացիոն և քիմիական վարակման օջախներ և պաշտպանման մեթոդները: Բնակչության և կենդանիների պաշտպանության կազմակերպումը արտակարգ և պատերազմական իրավիճակներում, անհատական պաշտպանական միջոցներ: Անասնաբու-ծության վարումը ռադիոակտիվ աղտոտվածության պայմաններում:</p>	5	141
14	<p><u>Չարկեր և հարկային քաղաքականություն</u> Չայաստանի Չանրապետության հարկային հարաբերությունների իրավական կարգավորման հարցերը, նոր տնտեսական համակարգի ձևավորմամբ, շուկայական հարաբերությունների հաստատմամբ, սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացի խորացմամբ: Չարկային հարաբերությունների և հարկման գործընթացի նոր բովանդակությունը: Տնտեսության մասնավոր հատվածի ծավալի ընդլայնումը և հարկային գործընթացի</p>	2	60

	կարգավորման դերը և նշանակությունը, դրանց կատարելագործման անհրաժեշտությունը: Հարկային քաղաքականությունը իրազեկ լինելը, դրա ճիշտ ըմբռնումը և մեկնաբանումը կենսական անհրաժեշտություն է ոչ միայն հարկային մարմինների ածխատակիցների, հարկատուների, այլ նաև յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ և քաղաքացու համար:		
	<u>Ընտրովի դասընթացների կրթաբլոկ</u>		50
	Համակարգչային տեխնիկա (օպերատորական գործ)		68
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ		
	<u>Հանրապետական բաղադրիչ</u>		
1	<u>Գյուղ. կենդանիների անատոմիա</u> Շարժողական համակարգ, մաշկային ծածկույթը և նրա ածանցյալները: Անոթաբանություն, ներքին սեկրեցիայի գեղձեր, անալիզատորներ, բջջաբանություն, սաղմնաբանություն, հյուսվածքաբանություն, զգայական օրգաններ, արյունաստեղծ օրգաններ մարսողական, շնչառական, միզային, բազմացման օրգաններ:	9	270
2	<u>Հյուսվածքաբանություն</u> Բջիջը կենդանի օրգանիզմների կառուցվածքային, կենսագործունեության և զարգացման միավոր: Բջջի կառուցվածքային բաղադրամասերը՝ բջջաթաղանթ, պլազմային մեմբրան, դրանց կառուցվածքն ու գործունեությունը: Ցիտոպլազմայի ֆիզիկոքիմիական առանձնահատկությունները, մանրադիտակային և գերմանրադիտակային կառուցվածքը: Կորիզային կառուցվածքների դերը բջիջների կենսագործունեության մեջ: Բջջային ցիկլ, ծերացում, մահ: Բջիջների միացման ձևերը: սպերմատազոիդ, սպերմատոգենեզ: Չվաբջիջ, օվոգենեզ: Չվաբջիջների դասակարգումը: Նշտարիկի, երկկենցաղների, ձկների, թռչունների, կաթնասունների, սաղմի զարգացման օրինաչափությունները: Էպիթելային, շարակցական, մկանային, նյարդային հյուսվածքների բնութագիրը, զարգացումը, դասակարգումը, կառուցվածքը: Պարենխիմատոզ, շերտավոր օրգանների հյուսվածքաբա-	3	90

	<p>նական կառուցվածքի սկզբունքը: Գլխուղեղի կեղևի, ուղեղիկի և ողնուղեղի հյուսվածքաբանական կառուցվածքը: Ռեֆլեկտոր աղեղ: Ջգայարաններ: Աչքի խնձորիկի հյուսվածքաբանական կառուցվածքը: Էնդոկրին գեղձերի հյուսվածքաբանական կառուցվածքը: Սիրտ-անոթային համակարգի օրգանների հյուսվածքաբանական կառուցվածքի սկզբունքը: Մաշկի և նրա ածանցյալների հյուսվածքաբանական կառուցվածքը: Խողովակազմ օրգանների/ մարսողության, շնչառության, միզասեռական/ հյուսվածքաբանական կառուցվածքը:</p> <p>Սեռական ցիկլը և դրա հորմոնալ կարգավորումը:</p>		
3	<p><u>Գյուղ. կենդանիների ֆիզիոլոգիա</u></p> <p>Գյուղ.կենդանիների ֆիզիոլոգիական ֆունկցիաները և նրանց կարգավորումը, արյան համակարգի, շնչառության, մարսողության ֆիզիոլոգիա, նյութերի և էներգիայի փոխանակություն, արտաթորության պրոցեսները, նյարդային համակարգը:</p>	7	210
4	<p><u>Մանրէակենսաբանություն</u></p> <p>Միկրոօրգանիզմների դասակարգումը և անվանակարգումը, ձևը և կառուցվածքը, ֆիզիոլոգիան, նրանց ժառանգականությունը և փոփոխականությունը, արտաքին միջավայրի ազդեցությունը միկրոօրգանիզմների կենսագործունեության վրա, միկրոօրգանիզմների տարածվածությունը բնության մեջ և դերը նյութերի շրջանառությունում: Ուսմունք ինֆեկցիայի և իմունիտետի մասին, վարակիչ հիվանդությունների հարուցիչներ, կերերի, կաթի, մսի ձվի, կաշվի, մորթեղենի մանրէակենսաբանություն:</p>	4	120
5	<p><u>Ռադիոկենսաբանություն</u></p> <p>Միջուկային ֆիզիկայի էլեմենտները, իոնացնող ճառագայթաչափում և դոզաչափում, միջավայրի ռադիոակտիվ ախտոտումը, կենդանիների ճառագայթային ախտահարումները, ճառագայթային անվտանգության հիմունքները և աշխատանքի կազմակերպումը ռադիոակտիվ նյութերով աշխատելիս:</p>	2	60
6	<p><u>Գենետիկա և կենսաչափություն</u></p>	5	150

	Չատկանիշների ժառանգման օրինաչափությունները, քրոնոսոմային տեսություն, փոփոխականության ուսումնասիրման մեթոդները, արյան խմբերը, իմունիտետի գենետիկական հիմքը, ի ծնե անոմալիաներ և կանխարգելումը ժառանգական հիվանդությունների նկատմամբ: Ժառանգական կայունության բարձրացումը, մուտացիաներ և մուտագենեզ:		
7	<u>Չոռհիզիենա</u> Գ/կ ընդհանուր հիզիենա, օդի, ջրի, հողի, կերի, խնամքի, պահվածքի, անասնաշենքի հիզիենա, կենդանական ծագման հումքի և մթերքների հիզիենա: Անասնաշենքերի միկրոկլիման, գոնադրի պահպանման և վա-րակազերծման, կենդանիների կերակրման, մատղաշի աճեցման, կենդանիների բազմացման, աշխատանքի և անասնապահության մեջ աշխատող մարդկանց հիզիենա:	5	150
8	<u>Անասնաբուժության հիմունքներ</u> Ախտաբանական ֆիզիոլոգիա և անատոմիա, ոչ վարակիչ, ինֆեկցիոն և պարազիտար հիվանդություններ: Անասնաբուժական ծառայության դերը, խնդիրները և կենդանիների պահպանման, բուժման և մթերատվության բարձրացման բնագավառում: կենդանիների սանիտարա-հիգիենիկ վիճակի ապահովումը, որպես երաշխիք կենդանիների և մարդկանց առողջական վիճակի պահպանման:	4	120
9	<u>Ծննդագիտություն և բազմացման կենսատեխնիկա</u> Բազմացման անատոմա-ֆիզիոլոգիական հիմունքները, հղիության ֆիզիոլոգիան և շեղումները, ծնի ախտաբանությունը, կենդանիների ֆիզիոլոգիական առանձնահատկությունները և հիվանդությունները, անոմալիաներ և կաթնագեղձի հիվանդություններ և նրանց կանխարգելումը, անպտղություն և ինպոտենցիա; Բազմացման կենսատեխնիկա:	5	150
10	<u>Կերարտադրություն ագրոնոմիայի հիմունքներով</u>	5	150

	Բուսաբանության և ագրոնոմիայի հիմունքները, հողագիտություն, բույսերի կյանքի պայմանները, ցանքաշրջանառություն, հողի մշակում, պայքար մոլախոտերի դեմ, պարարտանյութերի օգտագործումը, դաշտային կերարտադրություն, հատիկային մշակաբույսեր, արմատապտուղներ և այլ հյութալի կերեր, մարգագետնային կերարտադրություն, բնական կերահան-դակներ և նրանց բարելավումը, արոտավայրեր:		
11	<u>Անասնապահության մեքենայացում</u> Ֆերմայում աշխատատար պրոցեսների մեքենայացում. կերերի կուտակ-ման, բաշխման, մշակման և նախապատրաստման, ջրամատակարարման, գոմաղբի հավաքման և հեռացման, կովերի կթի և կաթի նախնական մշակման, ոչխարների խուզի, պրոֆիլակտիկ լողացման, սարքավորումների տեխնիկական սպասարկում:	4	120
12	<u>Գյուղատնտեսության էլեկտրիֆիկացում</u> Չաստատուն և փոփոխական սինուսոիդալ հոսանքների միաֆազ և եռաֆազ համակարգեր: էլեկտրական լուսավորում և ճառագայթում, ֆերմաներում կերի պատրաստման և բաշխման, ջրամատակարարման, կթի, կաթի մշակման, գոմաղբի հեռացման տեղակայանքների էլեկտրահաղորդակներ, էլեկտրատաքացուցիչ տեղակայանքներ, էլեկտրական ցանկապատում:	2	60
13	<u>Անասնաբուծության հետազոտության մեթոդիկա</u> Անասնաբուծությունում գիտաարտադրական առաջընթացը պայմանավորող հետազոտությունների դիտարկման և փորձարարական մեթոդները: Չետազոտությունների կազմակերպման և մեթոդիկայի կազմման սկզբունքները: Դիտարկման մեթոդի էությունը, ուսումնասիրվող նյութի դասակարգումը, չափումը, փաստերի համակարգումը: Փորձարարական մեթոդի էությունը, հետազոտությունների միավորները, կենսաբանական և արտադրական պրոցեսների ուսումնասիրումը: Փորձերի կատարման համար կենդանիների խմբավորման մեթոդները: Փորձի ընդհանուր մեթոդական չափանիշները, հավաստիությունը ապահովող պայմանները,	2	90

	տվյալների մշակումը և վերլուծությունը:		
	Ընտրովի դասընթացների կրթաբլոկ		50
	ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿՐԹԱԲԼՈԿ		
	Բուհական բաղադրիչ		
1	<p><u>Գյուղ. կենդանիների կերակրում</u></p> <p>Գյուղատնտեսական կենդանիների կերակրման հիմունքներ բաժինը ներառնում է կերերի քիմիական կազմի և սննդարարության, սննդարար նյութերի մարսելիության, մարսողության, ազոտի և ածխածնի հաշվեկշռի, նյութափոխանակության և էներգափոխանակության թեմաները: Կերերի պրոտեինային, ճարպային, ածխաջրային, վիտամինային, հանքային սննդարարությունը և կերերի ու կերաբաժինների ընդհանուր սննդարարության գնահատման մեթոդները: Կերերի դասակարգման մոտեցումները, արտադրության, պատրաստման, պաշարման, պահպանման և օգտագործման տեխնոլոգիական պահանջները: Կերատեսակները ըստ սննդարարության, լիարժեքության, ուտելիության և կերային ու կերակրման առանձնահատկությունների: Տրվում են նաև դրանց նախնական վերամշակման, սննդարարության և ուտելիության բարձրացման լուծումները: Գյուղատնտեսական կենդանիների տարբեր սեռահասակային կազմի լիարժեք կերակրման տեխնոլոգիական լուծումները, կերաբաժինների կազմման, կերախառնուրդների և համակցված կերերի պատրաստման պահանջները: Կերի բազայի, կերապահովվածության, կերօգտագործման և հատուցման մեկնաբանությունները</p>	13	390
2	<p><u>Գյուղատնտեսական կենդանիների բուծում</u></p> <p>Գյուղատնտեսական կենդանիների ծագումը և ընտանեացման էվոլյուցիան: Հասկացություն ցեղի մասին: Ցեղստեղծման գործոնները: Ցեղերի կառուցվածքը, հատկանիշները, դասակարգումը և կատարելագործումը: Կենդանիների անհատական զարգացում /օնոտոգենեզ/: Կապը ֆիլոգենեզի հետ: Օնոտոգենեզի փուլերը և դրսևորման հիմնական օրինաչափությունները /անհամաչափություն, պարբերականություն և ռիթմիկություն/: Աճի ու զարգացման վրա ազդող</p>	11	330

	<p>գործոնները: Թերզարգացման էությունը և համակշռման հնարավորությունները: Ուսմունք համակազմվածքի մասին: Նրա և օրգանիզմի կենսագործունեության դրսևորումների կապը: Համակազմվածքի տիպերի դասակարգումը: Դրանց վրա ազդող գործոնները: Արտակազմվածքի և ներքնակազմվածքի գնահատման մեթոդները: Դրանց գիտագործնական նշանակությունը: Գյուղատնտեսական կենդանիների կենսաբանական և տնտեսական հատկանիշները: Կենդանիների գնահատումը և բռնիտավորումը: Ընտրության տեսական հիմունքները, ձևերը և մեթոդները: Դրա արդյունավետության վրա ազդող գործոնները: Ջուլզրնտրություն, սկզբունքները, մեթոդները և փոխկապակցվածությունը ընտրության հետ:</p> <p>Ընտրության և զույգընտրության կազմակերպումը: Բուծման մեթոդները: Մաքրացեղ բուծում և տրամախաչում: Դրանց նպատակը և խնդիրները: Ցեղի կառուցվածքի բարելավման և կատարելագործման ուղիները: Տրամախաչման եղանակները և դրանց նշանակությունը: Տոհմային աշխատանքների հիմունքները:</p>		
3	<p><u>Տոհմային գործ</u></p> <p>Տոհմային կենդանիների գնահատման և փորձարկման համակարգը: Կենսատեխնոլոգիայի կիրառումը բարձրաժեք կենդանիների բազմացման և ընտասերման ընթացքի արագացման համար:Տոհմային ընտրության և զույգընտրության անասնաբուծական հնարքներն ու կազմակերպական միջոցառումները: ցեղի կառուցվածքային տարերի՝ գծերի և ընտանիքների ստեղծումը: Գծային բուծման կազմակերպումը, ինբրեդային դեպրեսիայի կանխումը: Միջգծային կրոսներ:Սինթետիկ գծերի ստեղծումը: Ցեղերի և հոտերի կատարելագործման տոհմասելեկցիոն պլանի կազմումը: Տոհմային աշխատանքում միջցեղային և միջտեսակային տրամախաչման կիրառումը: Նոր ցեղերի ստեղծման մեթոդիկան: Ցեղի ստանդարտների մշակումը: Խոշորամասշտաբ սելեկցիայի կազմակերպումը, տոհմային</p>	4	120

	կորիզի ստեղծումը, ընտրության արդյունավետության բարձրացման միջոցառումները:		
4	Կաթի գործ: Կովի կաթի քիմիական կազմը, նրա ֆիզիկական և քիմիական հատկությունները, լավորակ կաթի ստացումը, կաթի նախնական մշակումը տնտեսություններում, մթերվող կաթի ստանդարտները: Անարատ և թթու կաթնամթերքների, պաղպաղակի, պանիրների, կարագի, կաթնային պահածոների արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները:	4	120
5	<u>Ագրոպարենային համակարգի կազմակերպությունների կառավարում</u> Կառավարման գիտության առարկան, մեթոդաբանությունը և սկզբունքները: Գյուղատնտեսական մթերքներ արտադրող կազմակերպությունների տեսակները, դրանց արտաքին և ներքին միջավայրերի բնութագրումը: Կառավարման գործառույթները, մեթոդները, կոմունիկացիաները և կառավարչական որոշումները: Հանրային կառավարման էությունը և ՀՀ ագրոպարենային համակարգի կառավարման առանձնահատկությունները: Խմբերի կառավարումը: Իշխանությունը և առաջնորդումը: Կոնֆլիկտների և սթրեսների կառավարումը: Արտադրության կառավարումը, անձնակազմի կառավարման փուլերը: Կառավարչական աշխատանքի արդյունավետությունը և դրա բարձրացման հիմնական ուղիները:	3	90
6	<u>Տավարաբուծություն</u> Տավարի կենսաբանական առանձնահատկությունները, մթերատվության ուղղության հետ կապված նրա մարմնակազմության տիպը, կաթնային և մսային մթերատվության ձևավորումը և հաշվառման մեթոդները: Տավարի տոհմակից տեսակների օգտագործումը մթերք ստանալու և նոր տիպերի ստացման գործում, կաթնային և մսային ուղղության տավարաբուծությունում տարվող աշխատանքների առանձնահատկությունները:	12	252
7	<u>Ոչխարաբուծություն և այծաբուծություն</u>	9	287

	<p>Ոչխարաբուծության և այծաբուծության նշանակությունը և զարգացման հեռանկարները հանրապետությունում, նրանց կենդանաբանական և տնտեսական դասկարգումը, կենսաբանական առանձնահատկությունները, արտակազմվածքը և համակազմվածքը կապված բրդային, մսային, կաթնային, մուշտակատու, գառնենհատու, ինչպես նաև այծերի աղվանազային մթերատվության հետ, ոչխարների վերարտադրությունը, խուզի կազմակերպումը, տոհմային պլանի կազմելը, ոչխարների և այծերի կերակրումը և խնամքը:</p>		
8	<p><u>Խոզաբուծություն</u></p> <p>Խոզերի կենսաբանական առանձնահատկությունները, ցեղային կազմը, կերակրման պահվածքի և տոհմային աշխատանքի առանձնահատկությունները:</p> <p>Խոզաբուծական տարբեր տիպի տնտեսություններում խոզի մսի արտադրության տեխնոլոգիական չափանիշները:</p>	9	260
9	<p><u>Թռչնաբուծություն</u></p> <p>Թռչունների ծագումը, կենսաբանական առանձնահատկությունները, արտակազմվածքը և համակազմվածքի տիպերը; թռչունների մթերատվությունը, տեսակները, ցեղերը և կրոսները, տոհմային աշխատանքը թռչնաբուծությունում, ձվերի ինկուբացիան, տոհմային և արդյունաբերական թռչունի առանձնահատկությունները: Սննդային ձվերի և բրոյլերների արտադրության տեխնոլոգիական պրոցեսի էությունը; բադերի, սագերի, լորերի, աղավնիների, հնդկահավերի մսի արտադրության առանձնահատկությունները և նրանց հետ տարվող տոհմային աշխատանքի կազմակերպումը:</p>	7	179
10	<p><u>Մեղվաբուծություն</u></p> <p>Մեղվաընտանիքների կենսաբանությունը, փեթակներ, գույք և մեղվաընտանիքների կառույցներ, մեղվաընտանիքների բուծումը և պահվածքը: Մեղուների կերաբազան, մեղուների միջոցով բույսերի փոշոտումը, մեղուների հիվանդությունները և վնասատուները, մեղվաբուծական տնտեսությունների էկոնոմիկան և կազմակերպումը:</p>	4	120
11	<p><u>Գազարաբուծություն և գազանաբուծություն</u></p>	4	120

	<p>ճագարների կենսաբանական առանձնահատկությունները, մսային և մորթեղենային մթերատվությունը, ճագարների հոտի վերարտադրությունը, կերակրումը և պահվածքը, տոհմային աշխատանքի կազմակերպումը: ճագարների ցեղերը: Մորթեղենային գազանների բնութագիրը /ջրաքիսներ, ճահճակուղբեր, բևեռաղվեսներ, աղվեսներ/ բազմացման ֆիզիոլոգիական առանձնահատկությունները, կերակրումը և պահվածքը:</p>		
12	<p><u>Ձկնաբուծություն</u></p> <p>Ձկնաբուծության ներկայիս վիճակը և զարգացման հեռանկարները, ձկնաբուծության կենսաբանական հիմունքները, տնտեսությունների նախագծումը, կառուցվածքը, դասակարգումը: Արտադրողների ձեռք բերումը, բոնիտավորումը, ձկնկիթի ստացումը, ինկուբացիան, թրթուրների և մատղաշի աճեցումը, ընտրասերումը և տոհմային գործը ձկնաբուծությունում:</p> <p>Բնական և արհեստական կերեր, ձկների կերակրումը: Ապրանքային ձկնաբուծություն, բազմակուլտուրա, լճակային տնտեսություններ, ծովային ապրանքային ձկնաբուծությունը և դրա ձևերը:</p>	4	120
13	<p><u>Ձիաբուծություն</u></p> <p>Ձիերի կենսաբանական առանձնահատկությունները. համակազմվածքի տիպերը, նշանները և երանգները, արատներն և թերությունները, տարիքի որոշելը ատամների միջոցով, ձիերի ցեղերը, մթերատվությունը /կաթնային և մսային/, բանող ունակությունները, վերաարտադրությունը, կերակրման և խնամքի առանձնահատկությունները, վարժեցումը, բոնիտավորումը: Ձիաբուծության զարգացման հիմնական միջոցառումները:</p>	4	120
14	<p><u>Անասնամթերքների նախնական վերամշակման տեխնոլոգիա և ստանդարտավորում</u></p> <p>Սպանդային կենդանիների իրացման կարգի ընդհանուր դրույթները և մթերումների ձևերի կատարելագործումը, սպանդային կենդանիների փոխադրումը, հանձման և ընդունման կարգը, սպանդային կենդանիների մշակումը, մսի</p>	4	120

	<p>ձևաբանական և քիմիական կազմը, ապրանքագիտությունը, պետական ստանդարտը, սպանդից հետո մսի մեջ կատարվող փոփոխությունները: Ենթամթերքների, սննդի ճարպի, աղիքային հոււնքի և արյան վերամշակման տեխնոլոգիան, տեխնիկական ենթամթերքներ:</p> <p>Կաշվե-մորթյա հոււնքի նախնական վերամշակման տեխնոլոգիա, սպանդային մթերքների անասնաբուժա-սանիտարական գնահատման հիմունքները, մսի պահածոյացման տեխնոլոգիան, ընտանի թռչունների ձվի հավաքման և գնահատման տեխնոլոգիան, մեղրի գնահատումը: Անասնաբուժական մթերքների ստանդարտի դրման առանձնահատկությունները:</p>		
	<u>Ընտրովի դասընթացների կրթաբլոկ</u>		50
	<u>Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկ</u>		70
	Տեսական ուսուցման ընդհանուր ժամաքանակը՝ 136 շաբաթ		

Ծանոթություն. Յուրաքանչյուր առարկային հատկացված ժամաքանակի մեջ մտնում է լսարանային և արտալսարանային ժամաքանակը (70 : 30% հարաբերությամբ)

4.1. Առկա ձևով ուսուցման դեպքում լսարանային պարապմունքներին պետք է տրամադրվի յուրաքանչյուր ուսումնական դասընթացին հատկացվող ժամաքանակի 50%-ից ոչ պակասը, իսկ հեռակա ձևով ուսուցման դեպքում 10 %-ից ոչ պակասը:

ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՅՈՒՐԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

5.1. գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի
որակավորման աստիճան

յուրացման ժամկետը ներառյալ ուսանողի հետազոտական աշխատանքը, առկա ուսուցման ձևով 242 շաբաթ է, որից.

- տեսական ուսուցումը` 150 շաբաթ,
- քննաշրջանները` 27 շաբաթ,
- պրակտիկաները` 19 շաբաթ, որից`
ուսումնական – 4
արտադրական - 10
նախադիպլոմային - 5
- եզրափակիչ պետական որակավորումը, ներառյալ ավարտական որակավորման (դիպլոմային աշխատանքի պատրաստումը և պաշտպանությունը` 10 շաբաթ
- արձակուրդները` 36 շաբաթ:
Դիպլոմային աշխատանքի կատարման ժամանակացույցը, ընթացիկ վերահսկման և ատեստավորման ձևը, պաշտպանության թույլատրման կարգը սահմանում է բուհը (ֆակուլտետը), որը հաստատում է բուհի գիտական խորհուրդը:

5.2. Միջնակարգ (լրիվ)ընդհանուր կրթություն ունեցող անձանց համար Անասնաբուծ-բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի յուրացման ժամկետները հեռակա ուսուցման ձևով երկարացվում են մինչև 1 տարի` սույն պետական կրթական չափորոշիչի թ. 1.2 –ով սահմանված ժամկետի նկատմամբ:

5.3. Ուսանողի ուսումնական բեռնվածքի առավելագույն ծավալը սահմանվում է շաբաթական 45 ժամ` ներառյալ լսարանային և արտալսարանային (ինքնուրույն) աշխատանքները:

5.4. Առկա ուսուցման ձևով սովորող ուսանողի լսարանային պարապմունքների ծավալը, չպետք է գերազանցի շաբաթական 30 ժամը: Նշված ծավալում չեն ընդգրկվում ֆիզիկական կուլտուրայի և ֆակուլտատիվ դասընթացների դասաժամերը: Ուսումնական տարվա տեսական ուսուցման տևողությունը 34 շաբաթ է:

5.5 Հեռակա ուսուցման ձևով սովորող ուսանողի համար պետք է ապահովվի տարեկան 160 ժամից ոչ պակաս ծավալով դասախոսների հետ պարապմունքներ անցկացնելը:

5.6. Ուսումնական տարվա արձակուրդները պետք է 7-10 շաբաթ լինեն, այդ թվում՝ 2 շաբաթից ոչ պակաս՝ ձմեռային քննաշրջանից հետո:

**6. 310201 ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ**

6.1. Գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի որակավորման աստիճան մշակմանը ներկայացվող պահանջները.

6.1.1. Սույն պետական կրթական չափորոշիչի հիման վրա բուհն ինքնուրույն է մշակում և հաստատում գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագիրը:

Ուսանողի կողմից ընտրովի դասընթացների ուսումնառությունը պարտադիր է, իսկ նրանց ցանկը երաշխավորական բնույթ է կրում, որը կարող է փոփոխել կամ լրացնել բուհը:

Ուսումնական դասընթացի բաղադրիչների տեսակները /դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր պարապմունքներ, տնային և կուրսային աշխատանքների խորհրդատվություն և այլն/ և ծավալները` դասընթացին հատկացված դասաժամերի շրջանակում սահմանում է բուհը: Ուսուցման ողջ շրջանում ուսումնական ժամաքանակի ընդհանուր հաշվեկշռում ակտիվ մեթոդներով ուսանողի տեսական ուսուցումը չպետք է ցածր լինի 25%-ից:

Ուսանողի գիտելիքի ստուգման և գնահատման համակարգի տեսակն ընտրում է բուհը: Տվյալ դասընթացից ուսանողի գիտելիքների եզրափակիչ գնահատականը չպետք է հիմնավորվի միայն վերջին քննության /ստուգարքի/ արդյունքով, այն պետք է հաշվի առնի ուսանողի ակտիվությունը դասընթացից և ընթացիկ առաջադիմությունը կիսամյակի /ների/ ընթացքում: Եզրափակիչ գնահատման դեպքում գնահատականի 40% -ը ձևավորվում է ընթացիկ առաջադիմությամբ և միջանկյալ ստուգումներով, իսկ 60%-ը` եզրափակիչ քննության /ստուգարքի/ արդյունքով: Քննությունների անցկացման հիմնական ձևը գրավոր կամ գրավոր- բանավորն է:

Բացառության կարգով բուհը կարող է սահմանել բանավոր քննություններ, բայց դրանք չպետք է գերազանցեն քննությունների ընդհանուր քանակի 25%-ը:

Բուհի իրավունքն է ուսումնական դասընթացների եզրափակիչ ստուգման եղանակի /ստուգարք կամ քննություն/ ընտրությունը և ձևի սահմանումը:

Ուսանողների գիտելիքների ընթացիկ գնահատման համակարգում բուհն օգտագործում է իրեն նպատակահարմար գնահատման սանդղակ: Միջազգային մասնագիտական կրթական համակրգին ինտեգրվելու և ուսանողների ակադեմիական շարժունակությունն ապահովելու նպատակով ուսումնական գործընթացում գերադասելի է գիտելիքների ստացման և գնահատման վարկային / կրեդիտային/

համակարգի ներդրումը և օգտագործումը: Դասընթացից եզրափակիչ գնահատական նշանակելու դեպքում անհրաժեշտ է անցնել գիտելիքների գնահատման ավանդական համակարգին/ «գերազանց», «լավ», «բավարար», «անբավարար», «ստուգված», «չստուգված»/:

Կուրսային աշխատանքը դիտարկվում է որպես դասընթացի ուսումնական բաղադրիչ և իրականացվում է այդ դասընթացին հատկացված դասաժամերի հաշվին: Հիմնական մասնագիտական դասընթացներից կուրսային աշխատանքի կատարելը պարտադիր է, բայց ուսուցման ողջ շրջանում դրանք չպետք է գերազանցեն 5-ը: Մասնագիտության ուսումնական պլանով /հավելված 2/ նախատեսված բոլոր ուսումնական դասընթացների, կուրսային աշխատանքների և պրակտիկաների համար պարտադիր է եզրափակիչ գնահատականի նշանակումը:

Մասնագիտացման դասընթացների կրթաբլոկը ընդհանուր մասնագիտական դասընթացների կրթաբլոկի տրամաբանված հաջորդականությունն է, որը ընտրած մասնագիտությամբ նախատեսված գործունեության բնագավառներում նպաստում է ուսանողի խոր մասնագիտական գիտելիքների և ունակությունների ձեռքբերմանը: Այն մասնագիտությունների գծով, որոնց անվանման մեջ առկա է անասնաբուծություն, արտահայտությունը, ընտրած բնագավառի համար շրջանավարտի պատրաստման առանձնահատկությունները առաջին հերթին հաշվի են առնվում մասնագիտացման դասընթացների միջոցով: Բուհը պետական կրթական չափորոշիչի հավելված 1-ում տրված ցանկից ինքնուրույն է ընտրում իրեն համապատասխանող մասնագիտացումը և իրավունք ունի փոփոխելու կամ լրացնելու մասնագիտացման դասընթացների ցանկը, կամ էլ ՀՀ ԿԳՆ մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչը մշակող գիտամեթոդական հանձնաժողովի հետ համաձայնեցրած ձևավորելու նոր մասնագիտացում:

Ֆակուլտատիվ դասընթացների կրթաբլոկի ցանկը նույնպես երաշխավորական բնույթ է կրում և ուսանողի համար պարտադիր չէ, իսկ դրանց հաճախելու դեպքում կրթաբլոկին հատկացված ժամաքանակների 30 % –ին վերաբերվող դասընթացներից պարտադիր է ուսանողների գիտելիքների ստուգումը և գնահատումը:

6.1.2. Մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու դեպքում բուհն իրավասու է՝

- 5%-ի սահմաններում փոփոխել դասընթացների կրթաբլոկներին հատկացրած ժամաքանակները, իսկ առանձին դասընթացներինը՝ մինչև 10%-ի սահմաններում,

- ձևավորել հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական դասընթացների կրթաբլոկ, որի հանրապետական բաղադրիչում նշվածներից պարտադիր է հետևյալ դասընթացների առկայությունը`

«Ֆիզիկական կուլտուրա» ,

«Հայ ժողովրդի պատմություն»,

«Հայոց լեզու և գրականություն»,

«Ռուսաց լեզու և խոսքի մշակույթ»,

«Օտար լեզու»,

«Փիլիսոփայություն»:

Մնացած դասընթացները կարող են ընդգրկվել ըստ բուհի հայեցողությամբ: Այս դեպքում հնարավոր է նրանց միջդասընթացային միավորումը` բովանդակության պարտադիր նվազագույնի պահպանմամբ:

Եթե դասընթացը ընդհանուր մասնագիտական կամ մասնագիտացման դասընթացների կրթաբլոկի մի մասն է կազմում, դրա համար հատկացված ժամերը վերաբաշխվում են ՀՍՏ դասընթացների վրա:

Ֆիզիկական կուլտուրայի պարապմունքները հեռական և դրսեկության ձևերով ուսումնառող ուսանողներին համար կարող են իրականացվել նրանց ցանկությամբ,

- Ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ) դասընթացների դասավանդումն իրականացնել հեղինակային դասախոսությունների, անհատական և կոլեկտիվ պարապմունքների, առաջադրանքների ձևով` բուհի մշակած ծրագրերով, հաշվի առնելով բուհի մասնագիտական առանձնահատկությունները, դասախոսների հետազոտական ուղղվածությունը և հակումները, որոնք կապահովեն կրթաբլոկի դասընթացների թեմատիկայի լուսաբանումը` ուսանողների մասնագիտական կողմնորոշմանը համապատասխան,

- սահմանել ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական (ՀՍՏ), ընդհանուր մաթեմատիկական և բնագիտական (ԸԲ) կրթաբլոկներում ընդգրկված դասընթացների առանձին բաժինների դասավանդման անհրաժեշտ խորությունը կրթաբլոկների դասընթացների ուղղվածությանը համապատասխան և մասնագիտության առանձնահատկությունների հաշվառմամբ: ԸՍ կրթաբլոկում պարտադիր է «Քաղ. պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր» առարկայի դասավանդումը: Բուհական բաղադրիչներին առանձնացված ժամաքանակները բուհի հայեցողությամբ կարող են

- օգտագործվել հանրապետական բաղադրիչներում ընդգրկված դասընթացների ավելի խորը դասավանդման համար,
- իրականացնել 310201 Անասնաբուծություն
դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտությամբ գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական որակավորման աստիճան կրթական ծրագիրը կրճատված ժամկետով՝ համապատասխան ուղղվածության միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող ուսանողների համար: Ուսուցման ժամկետների կրճատումը կատարվում է մասնագիտական կրթության նախորդ աստիճանում ուսանողների ձեռք բերած գիտելիքների, ունակությունների և հմտությունների հիման վրա: Այդ դեպքում ուսուցման տևողությունը 2 (երկու) տարուց պակաս չպետք է լինի: Կրճատված ժամկետով ուսուցումը թույլ է տրվում նաև այն անձանց, որոնց կրթական մակարդակը և բացառիկ ընդունակությունները բավարար հիմք են մնան ուսուցում իրականացնելու համար,

- առանձին դեպքերում, մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող ԿԳՆ գիտամեթոդական հանձնաժողովի հետ

համաձայնեցված 310201 Անասնաբուծություն
դասիչ, մասնագիտության անվանում

մասնագիտության համար բուհերն իրավունք ունեն մինչև 20% -ի սահմանում փոփոխել ընդհանուր մասնագիտական դասընթացների (ԸՄԴ) կրթաբլոկի ժամաքանակը, իսկ առանձին դասընթացները՝ մինչև 40 %-ի սահմաններում:

6.2. Ուսումնական գործընթացի կադրային ապահովման պահանջները

գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի որակավորման աստիճան

իրականացումը պետք է ապահովի գիտամանկավարժական կադրերով, որոնք, որպես կանոն, ունեն դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն (առնվազն դիպլոմավորված մասնագետ կամ մագիստրոս) և հետևողականորեն զբաղվում են հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ: Հատուկ մասնագիտացնող դասընթացներ դասավանդող դասախոսները, որպես կանոն պետք է ունենան գիտական աստիճան (գիտական կոչում) և կամ համապատասխան գործունեության ոլորտում աշխատանքի փորձ:

Գիտական աստիճան և կոչում ունեցող դասախոսները պետք է կազմեն պրոֆեսորադասախոսական կազմի 50 %-ից ոչ պակասը:

Հիմնական հաստիքային դասախոսները և 0,25 հաստիքից բարձր ձևակերպված համատեղողները նույնպես պետք է կազմեն ընդհանուրի 50 %-ից ոչ պակասը:

6.3. Ուսումնական գործընթացին ուսումնամեթոդական ապահովման պահանջները

գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի որակավորման աստիճան

իրականացումը պետք է ներառի ուսանողների կողմից մասնագիտական դասընթացների լաբորատոր, գործնական (սեմինար) աշխատանքների կատարում: Կենդանիների կերակրման, խնամքի, պահվածքի, նախիրների և հոտերի վերարտադրության, մթերքների արտադրության և ընդհանուր առմամբ անասնապահության վարման վերաբերյալ նաև ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացումը ներառյալ որպես պարտադիր բաղադրիչ՝ համակարգչային կիրառական ծրագրային փաթեթների օգտագործմամբ գործնական առաջադրանքների կատարում: Պարտադիր պահանջ է նաև անհրաժեշտ ինֆորմացիոն բազայի ստեղծումը, որն ապահովում է բարձրորակ մասնագետի պատրաստումը և ուսանողի մուտքը տարբեր ինֆորմացիոն աղբյուրները, ներառյալ Internet -ը:

գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրերի որակավորման աստիճան

իրականացումը պետք է ապահովի յուրաքանչյուր ուսանողի մուտքով դեպի գրադարանային ֆոնդեր և տվյալների բազաներ, որոնք ըստ բովանդակության համապատասխանում են հիմնական կրթական ծրագրով նախատեսված դասընթացների լրիվ ցանկին, նույն դասընթացների բաղադրիչներին (դասախոսություններ, գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքներ, կուրսային և դիպլոմային աշխատանքների խորհրդատվություն, պրակտիկաների ծրագրեր) նվիրված մեթոդական ձեռնարկների և ցուցումների առկայությամբ, ինչպես նաև տեսալսողական, բազմամիջավայրային նյութերով և ցուցադրական ձեռնարկներով:

Բուհի գրադարանը պետք է հագեցված լինի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների ուսումնամեթոդական համալիրներով, մասնագիտության նորմատիվ-իրավական ակտերով, տեղեկատու գրականությամբ և չափորոշիչներով:

6.4 Ուսումնական գործընթացի նյութատեխնիկական ապահովման պահանջները

գյուղատնտեսության բակալավրի պատրաստման հիմնական կրթական ծրագրի որակավորման աստիճան

իրականացնող բուհը պետք է ունենա նյութատեխնիկական բազա, որը համապատասխանում է գործող սանիտարահիգիենիկ նորմերին և հակահրդեհային կանոններին, ապահովում է օրինակելի ուսումնական պլաններով նախատեսված լաբորատոր, սեմինար, գործնական պարապմունքների և միջդասընթացային

պատրաստման բոլոր ձևերի և ուսանողների հետազոտական աշխատանքների կատարումը:

6.5.Պրակտիկաների կազմակերպման պահանջները

Ուսուցման ընթացքում առանձին մասնագիտական դասընթացների և ընտրած մասնագիտացման գծով գործնական ունակությունների, ապագա աշխատավայրում հմտություններ և փորձառումներ ձեռք բերելու նպատակով բնագավառի կազմակերպարարական տարբեր ձևերի կազմակերպություններում, հիմնարկներում և հաստատություններում, այդ թվում տավարաբուծական, ոչխարաբուծական, այծաբուծական, թռչնաբուծական, ձիաբուծական, մեղվաբուծական և գազանաբուծական տոհմային և ապրանքային առաջատար տնտեսություններում, կազմակերպվում են ուսանողների ուսումնական և արտադրական (ուսումնահետազոտական նախադիպլոմային) պրակտիկաներ:

Ուսանողի նախադիպլոմային պրակտիկան մասնագիտության ուսումնական պլանի պարտադիր բազադրիչն է, որի կազմակերպման և իրականացման պատասխանատուն բուհն է: Նախադիպլոմային պրակտիկան կազմակերպվում է այն հաշվով, որպեսզի շրջանավարտը կարողանա այդ ընթացքում ստացած փորձառությունը օգտագործել իր դիպլոմային աշխատանքը ձևավորելիս: Եթե շրջանավարտը ուսուցումը համատեղում է աշխատանքի հետ, բուհն իրավունք ունի թույլատրել աշխատավայրում պրակտիկայի անցկացումը, եթե շրջանավարտի աշխատանքի բնույթը համապատասխանում է բուհում ուսումնառած մասնագիտությանը:

Պրակտիկան կարող է կազմակերպվել նաև որոշակի կազմակերպություններում՝ նախապես կազմված անհատական ծրագրով, եթե շրջանավարտը նույն կազմակերպությունում պաշտոն է զբաղեցնում:

Արտադրական պրակտիկայի տեղերի բացակայության դեպքում բուհը (ֆակուլտետը) այն կազմակերպում է սեփական նյութատեխնիկական բազայի վրա, եթե այն հագեցված է ժամանակակից սարքավորմամբ և ծրագրային միջոցներով:

7. 310201 ԱՆԱՍՆԱԲՈՒԾՈՒԹՅՈՒՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

7.1. Շրջանավարտը պետք է կարողանա լուծել սույն պետական կրթական չափորոշիչի թ. 1.2 կետում նշված որակավորմանը համապատասխանող խնդիրները:

գյուղատնտեսության բակալավոր պետք է.
որակավորման աստիճան

ա/ հունանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում`

- իմանա ԶԶ Սահմանադրության և իր բնագավառի օրենքները,
- ազատ տիրապետի մասնագիտական հայոց լեզվին (գրավոր և բանավոր) և հաղորդակցի երկու օտար լեզուներով,
- ունենա պատկերացում առողջ կենսակերպի մասին, տիրապետի ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- իմանա հայ ժողովրդի պատմությունը և արդի քաղաքագիտական զարգացումները,
- ծանոթ լինի համաշխարհային մշակույթին, տիրապետի վարվելաձևի կուլտուրային,
- իմանա դրա էթիկական և իրավական նորմերը, որոնք կարգավորում են մարդու և հասարակության, մարդու և շրջակա միջավայրի հարաբերությունները,
- գիտենա հոգեբանության և մանկավարժության տարրերը,
- ծանոթ լինի ժամանակակից փիլիսոփայական ուղղություններին, գիտենա կեցության մասին գիտության հիմնադրույթները, նյութականի և վերացականի հասկացությունները մատերիայի կազմակերպման ձևերը, հետևի սոցիալական գլոբալ զարգացումներին,
- գիտենա տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրո- և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

բ/ Բնագիտության և մաթեմատիկայի բնագավառում`

- ծանոթ լինի ժամանակակից բնագիտության հիմնական սկզբունքներին և հայեցակարգերին, բնապահպանական գլոբալ և տարածքային հիմնախնդիրներին,
- տիրապետի մաթեմատիկայի հիմնական բաժինների մաթեմատիկական վիճակագրության մեթոդներին,

- տիրապետի ինֆորմացիայի հավաքման, պահպանման և մշակման համակարգչային մեթոդներին, կարողանա օգտագործել ժամանակակից ինֆորմացիոն տեխնոլոգիաներ,
- ծագած տարածայնությունները և բախումները լուծելու
- տարբեր զարգացման և մտավոր մակարդակի տեր մարդկանց հետ համագործակցելու
- մասնագիտական հարցերի շրջանակներում ընդունելի որոշումների հասնելու նպատակով բանակցություններ վարելու
- տարաբնույթ և տրարասեռ մշակույթային միջավայրերում աշխատելու և այլն:

գ/ Մասնագիտական գործունեության բնագավառում.

- տիրապետի գյուղատնտեսական կենդանիների կերակրման և սնման տեսական ու կիրառական գիտելիքներ,
- դրսևորի գյուղատնտեսական կենդանիների աճի ու զարգացման ընթացավորման, բուծման մեթոդների կիրառական հմտություններ,
- կարողանա մշակել և իրականացնել տոհմա - սելեկցիոն համակարգի համալիր աշխատանքներ, ցեղերի կատարելագործման և ընդհանուր առմամբ սելեկցիոն նվաճումների ձեռքբերման ուղղությամբ,
- դրսևորի անասնաբուծական տարբեր ճյուղերի վարման իմացություն և արտադրատեխնոլոգիական խնդիրների լուծումներ,
- գիտենա և կարողանա կազմակերպել անասնաբուծական որակյալ մթերքների արտադրությունը և դրանց վերամշակման և իրացման աշխատանքները,
- կարողանա լուծել նախիրների և հոտերի վերարտադրությունը, բարձր մթերատվությունը և սերնդատվությանը վերաբերվող խնդիրները,
- դրսևորի ռեսուրսները նպատակամետ օգտագործելու, էկոլոգիական պահանջները կատարելու իմացություններ:

Գյուղատնտեսության բակալավրի` ինֆորմացիայի հետ աշխատելու որակավորման աստիճան
փորձառությունը պահանջում է պարտադիր հմտություններ`

- պաշտոնական և ոչ պաշտոնական իրավիճակներում սեփական կարծիքը գրավոր և բանավոր ձևերով շարադրելու, քննարկելու և գործուն կարգով պաշտպանելու,
- լեզվային և մշակույթային տարբերությունների հաշվառմամբ գրավոր ինֆորմացիան լսելու և վերլուծորեն ընկալելու,
- բանավոր, տպագրված և էլեկտրոնային աղբյուրներից ստացված ինֆորմացիան որոնելու, ստանալու, համակարգելու, գրավոր ձևակերպելու և օգտագործելու:

ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործման գծով

Գյուղատնտեսության բալայավորը` պետք է ծանոթ լինի տվյալների մշակման որակավորման աստիճան երկուսից ոչ պակաս համակարգերի, համակարգչային և բազմաօգտագործման տեղային, ցանցային համակարգերին, ինչպես նաև կարողանա կատարել ինֆորմացիայի որոնում տվյալների ցանցային բազաներում (www), օգտվել էլեկտրոնային փոստից, տվյալների բազաների փաթեթից:

Գյուղատնտեսության բալայավորը` պետք է հասկանա իր մասնագիտության որակավորման աստիճան

եռթյունը և սոցիալական նշանակալիությունը, իր որակավորման շարունակական բարձրացման անհրաժեշտությունը հետբուհական և լրացուցիչ կրթություն ստանալու կամ էլ նոր գիտելիքների ինքնուրույն տիրապետման միջոցով:

7.2. Գյուղատնտեսության բալայավորի եզրափակիչ պետական որակավորման որակավորման աստիճան պահանջները

7.2.1. 310201, Անասնաբուծություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

Գյուղատնտեսության բալայավորի եզրափակիչ պետական որակավորումը որակավորման աստիճան ներառում է`

- ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի պաշտպանությունը և պետական քննությունների հանձնումը, որոնք թույլ են տալիս բացահայտելու շրջանավարտի տեսական և գործնական պատրաստությունը սույն պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

7.2.2. Գյուղատնտեսության բալայավորի ավարտական որակավորման որակավորման աստիճան

(դիպլոմային) աշխատանքին ներկայացվող պահանջները.

310201 Անասնաբուծություն մասնագիտությամբ
դասիչ, մասնագիտության անվանում

Գյուղատնտեսության բալայավորի ավարտական որակավորման (դիպլոմային) որակավորման աստիճան

աշխատանքը ավարտուն մի մշակում է, որը կատարված է մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և նպատակ ունի ամրապնդել և ընդլայնել շրջանավարտի տեսական և գործնական գիտելիքները, վերլուծված և ընդհանրացված են գիտա-արտադրական փորձերի արդյունքները, նաև անասնատեսակների կերակրման, բուծման, պահվածքի, մթերքների և հումքի արտադրության, շրջակա միջավայրի պահպանության կենսագործունեության անվտանգության և արտադրության ծրագրավորման և կազմակերպման ոլորտները:

Բովանդակային առունով ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսագիտական կամ փորձարարական հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս իրեն ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- ցույց տա շրջանավարտի կողմից գիտական և համակարգային վերլուծության մեթոդների յուրացման աստիճանը, ունակությունը կատարելու տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ,
- կրի ստեղծագործական բնույթ՝ հավաստի վիճակագրական տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի պատրաստության աստիճանը ինքնուրույն աշխատելու անասնաբուծության, կերարտադրության, անասնաբուծական մեթերքների և հումքի արտադրության տեխնոլոգիաներին, նոր ցեղերի ստացման և կատարելագործման հիմնահարցերին, ապրանքի որակին ներկայացվող պահանջներին,
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի ունակությունը՝ օգտագործելու տեղեկատվության որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, աշխատել բնագավառի նորմատիվ-իրավական ակտերի հետ,
- ձևավորված լինի հրատարակչական արդի նորմատիվներին և պահանջներին համապատասխան, ունենա հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և 60-70 էջ համակարգչային շարվածքի ծավալ:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն՝ ընդհանուր և մասնավոր անասնաբուծության, ինչպես նաև ընդհանուր անասնաբուծության առանցքային առաջնահերթ և հրատապ հարցերը, հաշվի առնելով բուհի (ֆակուլտետի) ընտրած մասնագիտացումները և ընտրովի դասընթացների բովանդակությունը ըստ կրթաբլոկների:

Ավարտական որակավորման (դիպլոմային) աշխատանքի կառուցվածքում պետք է ներառվեն հետևյալ բաժինները՝ տնտեսության կազմակերպատնտեսական և

անասնաբուժական բնութագիրը, կենսագործունեության անվտանգության, աշխատանքի պաշտպանության:

Գրականության ակնարկ, սեփական ուսումնասիրությունների արդյունքները, եզրակացություններ և առաջարկություններ, օգտագործված գրականության ցանկ:

7.2.3. Պետական քննություններին ներկայացվող պահանջները.

Եզրափակիչ որակավորման (պետական) քննության բովանդակությունը, անցկացման ձևը և ուսանողների գիտելիքների գնահատման չափանիշները սահմանում է բուհը (ֆակուլտետը) և հաստատում բուհի գիտական խորհուրդը:Նրանում պարտադիր կարգով ներառվում են հարցեր մասնագիտության հետևյալ հիմնական ուսումնական դասընթացներից՝ գյուղատնտեսական կենդանիների կերակրում և բուծում, տավարաբուծություն, խոզաբուծություն, ոչխարաբուծություն, թռչնաբուծություն, ճագարաբուծություն, մեղվաբուծություն, գազանաբուծություն, ձկնաբուծություն, ձիաբուծություն:

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝

ՀՀ կրթության և գիտության նախարարությանը առընթեր՝ 310201 Անասնաբուծություն
մասնագիտությունների ուղղությունը

մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչները մշակող
գիտամեթոդական հանձնաժողովի աշխատանքային խումբը

Անասնաբուծ. բժշկ. և անասնաբուծ. ֆակ. դեկան, անաս. գիտ. դոկտոր

Ա. Վ. Վարդանյան

Գ/Կ բուծման և կերակրման ամբիոնի վարիչ, գյուղ. գիտ. թեկնածու

Վ. Ա. Աբրահամյան

Մասնավոր անասնաբուծ. ամբիոնի վարիչ, գյուղ. գիտ. դոկտոր

Ռ. Թ. Սարգսյան

310201 Անասնաբուծություն մասնագիտության
դասիչ, մասնագիտության անվանում

պետական կրթական չափորոշիչը քննարկվել և հաստատվել է ՀՀ ԿԳՆ

պետական կրթական չափորոշիչները մշակող
մասնագիտությունների ուղղությունը

գիտամեթոդական հանձնաժողովի 2009թ. _____ -ի նիստում

(արձանագրության թ. _____)

Հանձնաժողովի նախագահ՝

Ա.ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

պաշտոնը, գիտ. աստիճանը, կոչումը

անուն, ազգանուն

« ____ » _____ 2009թ.

Համաձայնեցված է.

ՀՀ ԿԳՆ մասնագիտական կրթության

վարչության պետ՝

գիտ. աստիճանը, կոչումը

Ռ. Գասպարյան

անուն, ազգանուն

« ____ » _____ 2009թ.

Ցուցակ

h/թ	Ա.Ա.	գումարը	ստորագր
1.	Ղազարյան Ալբերտ		
2.	Օհանյան Մալվինա		
3.	Վանյան Էդմոնտ		
4.	Սարգսյան Գոհար Խ.		
5.	Սարգսյան Գոհար Իլյայի		
6.	Ժամկոչյան Անահիտ		
7.	Մեսրոպյան Ջուլետա		
8.	Թաթևոսյան Հովհաննես		
9.	Հովհաննեսյան Ստյոպա		
10.	Դարբինյան Գարիկ		
11.	Ցականյան Շուշանիկ		
12.	Ստեփանյան Անահիտ		
13.	Հակոբյան Հերիքնազ		
16.	Թարվերոյան Մերի		
17.	Գրիգորյան Հասմիկ		
18.	Բաբայան Գայանե		
19.	Բալթջյան Տիգրան		
20.	Նազարյան Համասփյուռ		
21.	Ջալիբեկյան Այիդա		
22.	Մկրտչյան Ռիմմա		
23.	Հովհաննեսյան Կիմա		
24.	Հովհաննեսյան Անահիտ		
25.	Խաչատրյան Շավարշ		
26.	Միերյան Սուրեն		
27.	Ավետիսյան Ժորա		
28.	Գրիգորյան Խաչիկ		

29.	Հովհաննիսյան Համլետ		
30	Հովհաննիսյան Ջուլետա		
31.	Անգորյան Անդրանիկ		
32.	Սարգսյան Վլոդյա		
33.	Բոյաջյան Սարգիս		
35.	Կարապուլյան Արմեն		
36.	Մանուկյան Մանվել		
37.	Խաչատրյան Հրանդ		
38.	Բոյաջյան Սարգիս		